



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2019 թվականի N 233

ՕԼՅԱ ՍԵՏՐԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Օլյա Սետրակի Պետրոսյանի կողմից լիազորված Անգելինա Ալեքսանյանի՝ համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի հունիսի 17-ի N2401-Ք դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում գտնվող, Օլյա Սետրակի Պետրոսյանին ժառանգության իրավունքով պատկանող 0,08 հա մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-092-0005-0003) և նրա վրա ամրակայված շինություններին տրամադրել՝ «Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գյուղ Վարդանիձոր, 4-րդ փողոց թիվ 12» հասցե:
2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունիսի 20
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2019 թվականի N 234

ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՅՎԱԾ ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին՝ 2019 թվականի հունիսի 12-ին ուղղած Արմեն Ներսեսյանի թիվ 2334 դիմումը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 28 շենքի բն. 16 հասցեում գտնվող ինքնական բացված 1 /մեկ/ հատ դռան բացվածքը, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժեներատեխնիկական օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ճանաչել օրինական:
2. Տեղեկացնել Արմեն Ներսեսյանին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 32-րդ կետի բ) ենթակետով սահմանված 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ վճարը համայնքային բյուջեի 900305083306 հաշվեհամարին 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Փոխել Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկ փողոցի թիվ 28 շենքի թիվ 16 բնակարանի 28,5 քմ մակերեսով տարածքի գործառնական նշանակությունը, որպես հասարակական նշանակության տարածք՝ ատամնաբուժարան:
4. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը, ղնել Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



2019թ. հունիսի 20
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Այունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2019 թվականի N 235

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» N 390-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի 2019 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N25-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողություն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



2019թ. հունիսի 20
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 236

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՖԻԱԼԵՏԱ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ
ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ
ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Ֆիալետա Անտոնյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. հունիսի 20-ի N 2459-Ֆ հայտը.

որոշում եմ՝

Անհատ ձեռնարկատեր Ֆիալետա Անտոնյանին (գրանցման համարը՝ 79.931738) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի 2. Անդրանիկի փողոցի թիվ 31 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱԲԱՐՅԱՆ



2019թ. հունիսի 21
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 237

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՖԻԱԼԵՏԱ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ
ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Ֆիալետա Անտոնյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. հունիսի 20-ի N 2460-Ֆ հայտը.

որոշում եմ՝


Անհատ ձեռնարկատեր Ֆիալետա Անտոնյանին (գրանցման համարը՝ 79.931738) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Զ. Անդրանիկի փողոցի թիվ 31 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում թույլատրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ



2019թ. հունիսի 21
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնք

ՀՀ, Այունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syunik@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 238

ԱՐԱ ՎՈԼՈՂՅԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արա Վոլոդյայի Մկրտչյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 2019 թվականի հունիսի 6-ին տրված N119613148807114936 տեղեկանքի և Կապանի ՀՔԲ -ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող VAZ 21065 մակնիշի, 18LU758 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Արա Վոլոդյայի Մկրտչյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը և գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը կազմում է 14297 (տասնչորս հազար երկու հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ, ինչը 2017-2019 թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել: 2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Արա Վոլոդյայի Մկրտչյանը (հիմք՝ 12.06.2019թ. փոստ. անդորրագիր AG014754805AM): Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմի տրված 190612071610000-1197491382 վճարման հանձնարարականի 18LU 758 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար 2019 թվականի հունիսի 12-ին վճարվել է 18333 (տասնույթ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը,

վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով, 3-րդ մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արա Վոլոդյանի Մկրտչյանի վերաբերյալ 2019 թվականի հունիսի 6-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԶԱԽԱՐՅԱՆ

2019թ. հունիսի 21
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syunik@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 239

ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՓԵՑՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Նունե Հովհաննեսի Փեցյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 6 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 06.06.2019թ. տրված N119613149898114906 տեղեկանքի և Կապանի ՀԲԲ-ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող VAZ 21043 մակնիշի, 29ՍՕ212 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Նունե Փեցյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա 2016-2019 թվականների գույքահարկը և գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը կազմում են 32210 (երեսուներկու հազար երկու հարյուր տասը) ՀՀ դրամ, ինչը չի վճարվել:

2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում հրավիրվել են վարչական վարույթի լումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Նունե Փեցյանը (հիմք՝ 17.06.2019թ. փոստ. անդորրագիր RG014754791AM): Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե : Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման(գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված իր հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Նունե Փեցյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 32210 (երեսուներկու հազար երկու հարյուր տասը) ՀՀ դրամ, որպես VAZ 21043 մակնիշի 29ՍՕ212 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 7578 (յոթ հազար հինգ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ վճարման հաշվեհամար՝ 900305081029):

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նունե Փեցյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունիսի 21
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 240

ԲԱԲԱԿԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ
ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Բաբկեն Ռազմիկի Մկրտչյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 6 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի ըննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 06.06.2019թ. տրված N12361315522114729 տեղեկանքի և Կապանի ՀՔԲ-ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող GAZ 31105-120 մակնիշի, 160U510 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Բաբկեն Ռազմիկի Մկրտչյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա 2013-2015 թվականների գույքահարկը և գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը կազմում են 90518 (իննսուն հազար հինգ հարյուր տասնութ) ՀՀ դրամ, ինչը չի վճարվել:

2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Բաբկեն Մկրտչյանը (հիմք՝ 12.06.2019թ. փոստ. անդորրագիր AG014754765AM) : Վերջինս ներկայացել է վարչական վարույթի լսումներին և ներկայացրել N190621016674099 դրամարկղի մուտքի անդորրագիր՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ: Համաձայն ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 21.06.2019թ. տրված N12361444955011938 տեղեկանքի 2019 թվականի հունիսի 21 -ի դրությամբ գույքահարկը և տույժը կազմում են 30 518 (երեսուն հազար հինգ հարյուր տասնութ) ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահամանդրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ

համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված իր հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Բաբկեն Ռազմիկի Մկրտչյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 30518 (երեսուն հազար հինգ հարյուր տասնութ) ՀՀ դրամ, որպես GAZ31105-120 մակնիշի 160U510 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 11018 (տասնմեկ հազար տասնութ) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ վճարման հաշվեհամար՝ 900305081029):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բաբկեն Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելուց հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունիսի 21 ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Այունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 241

ԺՈՐԱ ԲԱՔԿԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Ժորա Բաբկենի Կարապետյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 6 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը. վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 06.06.2019թ. տրված N119613152258114337 տեղեկանքի և Կապանի ՀՔԲ-ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող KIA PRIDE 1.3LX մակնիշի, 34ZA758 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Ժորա Բաբկենի Կարապետյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա 2014-2019 թվականների գույքահարկը և գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը կազմում են 41511 (քառասունմեկ հազար հինգ հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, ինչը չի վճարվել:

2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Ժորա Կարապետյանը (հիմք՝ 12.06.2019թ. փոստ. անդորրագիր 014754712AM) : Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե :Փոխադրամիջոցի սեփականատեր համարվաղ ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման(գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված իր հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե:Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը ՀայաստանիՀանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Ժորա Կարապետյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 41 511 (քառասունմեկ հազար հինգ հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, որպես KIA PRIDE 1.3LX մակնիշի 34ZA758 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 10 011 (տասը հազար տասնմեկ) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ վճարման հաշվեհամար՝ 900305081029):

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:


5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ժորա Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունիսի 21
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 242

ԳԱԳԻԿ ԼՅՈՎԱՅԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ
ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գագիկ Լյովայի Մինասյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 6 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 06.06.2019թ. տրված N123613155681114537 տեղեկանքի և Կապանի ՀՔԲ-ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող UAZ 469B մակնիշի, 11 SS 372 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Գագիկ Մինասյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա 2009-2019 թվականների գույքահարկը և գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը կազմում են 118 625 (մեկ հարյուր տասնութ հազար վեց հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, ինչը չի վճարվել:

2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Գագիկ Մինասյանը (հիմք՝ 15.06.2019թ. փոստ. անդորրագիր RG014754709AM) : Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին: Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե :Փոխադրամիջոցի սեփականատեր համարվալ ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման(գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված իր հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե:Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը ՀայաստանիՀանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Գագիկ Լյովայի Մինասյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 118 625 (մեկ հարյուր տասնութ հազար վեց հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, որպես UAZ 469 B մակնիշի 11 SS 372 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 36 125 (երեսուներեց հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ վճարման հաշվեհամար՝ 900305081029):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:


4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Մինասյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունիսի 21
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԳԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, megghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 243

ՍՈՒՐԻԿ ԾԱՏՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Սուրիկ Ծատուրի Հովհաննիսյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 6 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 06.06.2019թ. տրված N119613149748114455 տեղեկանքի և Կապանի ՀՔԲ-ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող HONDA FIT ARIA 1.3L մակնիշի, 29 LL 813 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Սուրիկ Հովհաննիսյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա 2015-2019 թվականների գույքահարկը և գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը կազմում են 51577 (հիսունմեկ հազար հինգ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ, ինչը չի վճարվել:

2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Սուրիկ Հովհաննիսյանը (հիմք՝ 12.06.2019թ. փոստ. անդորրագիր AG014754774AM): Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող այլ վճարումներ:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե :Փոխադրամիջոցի սեփականատեր համարվաղ ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման(գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված իր հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե:Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը ՀայաստանիՀանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Սուրիկ Հովհաննիսյանից հօգուտ Մեղրի համայնքի բյուջե գանձել 51 577 (հիսունմեկ հազար հինգ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ, որպես HONDA FIT ARIA 1.3 L մակնիշի 29 LL 813 պետհամարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 12 013 (տասներկու հազար տասներեք) ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ (գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ վճարման հաշվեհամար՝ 900305081029):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:


4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Մեղրի համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուրիկ Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. հունիսի 21
ք. Մեղրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնք

ՀՀ, Այունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հունիսի 2019 թվականի N 244

ԹԵԼՄԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Թելման Կարապետի Սահակյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի կողմից 06.06.2019թ. տրված N123613154921115018 և N123613155628115026 տեղեկանքների և Կապանի ՀԲԲ-ի կողմից տրամադրված տվյալների՝ քննարկվող VAZ21013 մակնիշի, 35AT829 պետհամարանիշի և VAZ21011 մակնիշի 35DV451 պետհամարանիշի փոխադրամիջոցները հանդիսանում են Թելման Կարապետի Սահակյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտ: Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը և տույժը 2017-2019 թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

2019 թվականի հունիսի 6 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի հունիսի 21-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին Թելման Կարապետի Սահակյանը չի ներկայացել: Վարչական մարմինը վարույթի լսումներին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցում է ուղարկել (հիմք՝ 07.06.2019թ. փոստ. անդորրագիր AG 014754788 AM) Թելման Սահակյանին, սակայն ուղարկված ծրարը ետ է վերադարձել «տեղափոխված» նշումով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի բ) և գ) կետերի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

բ) վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

գ) վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <բ> և <գ> կետերով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Թելման Կարապետի Սահակյանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը կասեցնել՝ մինչև դրա կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալը:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Մեղրի համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

2019թ. հունիսի 24
ք. Մեղրի



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԶԱՔԱՐՅԱՆ